ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/28» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 07.02.2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը,
Գնահատողներ՝
ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,
ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի սպա բ/ծ մայոր Մ. Գալստյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/28» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա.Սահակյան)

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված "Էլեկտրոնային աճուրդի իրականացման" կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին եզրակացության համաձայն՝ **«Կուրացիո», «Մի վնասիր» և «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ները** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չեն ունեցել: *Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:*

1.2 Սույն ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Eauction համակարգի միջոցով ներկայացված առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի՝

ա) «Մի վնասիր» ՍՊԸ-ի կողմից՝

- 31-րդ չափաբաժնի համար ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում է՝ «ուղղորդիչով, կողմնային անցք»-ի մասին տեղեկատվությունը,

- 49, 50 և 54-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքերի անվանումները անհրաժեշտ է հստակեցնել՝ բացառելով «վիրափողեր (դրենաժներ)» բառերը:

- 28, 30, 31, 32, 33, 35, 49, 50, 54, 58 և 59-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում է՝ Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրերի (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները), ինչպես նաև մատակարարման ժամանակ ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի մասին տեղեկատվությունը:

բ) «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից՝

- 51, 52, 53 և 56-րդ չափաբաժինների մասով ներկայացված՝ «Հավելված 2» և «Հավելված 3»-ում անհրաժեշտ է ճշգրտել մասնակցի անվանումը, ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում է՝ Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրերի (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները), արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագրի (ISO, GMP, CE Mark կամ այլ), արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագրի, նշված փաստաթղթերի (պատճեների)՝ մատակարարման ժամանակ ներկայացնելու, ինչպես նաև պիտանելիության ժամկետի (այն ունենալու դեպքում) մասին տեղեկատվությունը:

- 56-րդ չափաբաժնի մասով անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի անվանումը՝ բացառելով «կամ համարժեք» բառերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետը՝ հանձնաժողովը կասեցրեց նիստը և նույն օրը Eauction համակարգի միջոցով ծանուցեց առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Վերոնշյալ մասնակիցները սահմանված ժամկետում շտկեցին նշված անհամապատասխանությունները և 11.02.2019թ. հանձնաժողովը շարունակեց նիստը:

1.3 Հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով էլեկտրոնային գնահատման արդյունքները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, **«Կուրացիո», «Մի վնասիր» և «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ների** կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը և հրավերով պահանջվող փաստաթղթերը գնահատել սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

1.4 Հանձնաժողովը որոշեց **«Կուրացիո», «Մի վնասիր» և «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ներին**, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 24-րդ կետի 1-ին ենթակետը, հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ այն չափաբաժինների մասով, որոնցով նրանք ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ և վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

1.5 Հանձնաժողովը որոշեց 14-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին (հայտերը Eauction համակարգի կողմից մերժվել են պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցելու հիմքով)), իսկ 26 և 29-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

1.6 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/28» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/28» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Ա. Նազարյան
Գնահատող		Վ. Վահանյան
Գնահատող		Մ. Գալստյան
Գնահատող		Հ. Ավետիսյան
Գնումները համակարգող		Ա.Սահակյան